

Ժամանակաւ ամայի դաշտ մ'էր այս գեղը. իսկ երբ քանի մը եւրոպացիներ, որոնք որսորդութիւն ընելու մոլութիւնն ունէին, այս գեղն եկան զայն որսորդութեան յարմար գտնելնուն համար՝ մեր ազգայիններէն ալ շատերը անոնց հետեւելով եկան բնակութիւն հաստատեցին հոն: Այսօր եթէ եւրոպացիներն հեռանան այդ գեղէն՝ մեր ազգայիններն ալ կ'ընդուն զայն: Ո՛վ կրնայ պնդել, թէ մեր ազգայիններն եւրոպացիներու նմանիլ չեն ուզեր....:

Այս գեղին մէջ բաց ի հարաւէն կտիրէ նաեւ ազնուապետութիւնն, որ հարաւին չափ տենդ կ'աւտճառէ գեղին ազգային գործերուն եւ թերեւս անկէ աւելի վնասակար է:

Ամեն անգամ, որ թաղական խորհուրդ ընտրուած է՝ անդամներու մէջ անհամաձայնութիւն գոյացած է: Թաղական խորհուրդն այնքան կարծիքներէ բաղկացած է, որքան անդամներէ որ կ'ազմուած է, եւ այս շատ վնաս տուած է ազգային վարժարանին յառաջադիմութեան: Թաղական խորհրդոյ իւրաքանչիւր անդամ իրեն հաճելի եղած դրութեամբ կ'ուզէ առաջ տանիլ վարժարանը. մին ֆրանսական դրութիւնը կ'աշտպանէ, ուրիշ մը գերմանական դրութեան վրայ կ'յարձակի, երրորդ մը անգղիական դրութիւն իբրեւ փրկարար միջոց կ'նկատէ, չորրորդ մը թրքական դրութենէն մազիւ չափ չշեղիր, հինգերորդ մը աստորիական դրութիւնը կ'փաստաբանէ, եւ կարծիքներուն այս անհամաձայնութեան մէջ վարժարանը կ'ոգոցուի, եւ բացուելու համար կ'սպասէ, որ թաղական խորհուրդն հաճի դրութիւն մը ընդունիլ: Թաղական խորհուրդն չկրնար համաձայնութիւն գոյացնել. բայց վարժարանը կ'բացուի եւ կ'սկսի կառավարուիլ, օր մը գերմանական դրութեամբ, օր մը ֆրանսիական դրութեամբ, առաւօտ մը թրքական դրութեամբ եւ երեկոյ մը անգղիական դրութեամբ. այսպէս թաղականի մէջ համաձայնութիւն կ'ոյանայ եւ թաղեցին ուրախ սրտով զիրար կ'շնորհաւորէ ըսելով. «Ապրին թաղական խորհրդոյ մեծապատիւ անդամներն, որ իրարու հետ համաձայնած են»: Սակայն այս վարժարանին անկանոն ընթացքը մեծ օգուտ բերաւ ազգին, ծնունդ տուաւ Պերպերեան վարժարանին, այժմ Իճատիէ, որ պատիւ կ'բերէ ազգին:

Գիւղիս բնակիչներ շատ քաղաքավար են. իրարու սիրտ չկոտրելու համար ամենամեծ զոհողութիւններու յանձնառու կ'ըլլան:

Անցեալները ազնուապետական դասէն մէկը կ'ացինով մը վարժարանին հիմը տեղէն կ'հանէր. ուրիշ մ'ալ քանի մը քայլ հեռուէն